Նվիրվում է Կ. Սարաջևի ծննդյան 145-ամյակին

ԳԱՅԱՆԵ ՄՆԱՑԱԿԱՆԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տավիղահարուհի, միջազգային մրցույթների դափնեկիր,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր
E-mail: gayane.tavix@mail.ru
Doi:10.58580/18290019-2022.1.62-12

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 8.9.2022 թ.,
ընդունվել է տպագրության' 10.10.2022 թ., ներկայացրել է
հեղինակը' 1.9.2022 թ.

Սարաջևաներ

Ամփոփում

Հեղինակ՝ Գայանե Մնացականի Հարությունյանը սովորել է Նատալյա Պոպովա-Սարաջևայի դասարանում, այնուհետև ասպիրանտուրան Կիռա Սարաջևայի ղեկավարությամբ Մոսկվայի Գնեսինների անվան ռուսական երաժշտական ակադեմիայում և իր հուշերն է ներկայացնում հոդվածում՝ Սարաջևաների երեք սերունդ տավղահարների մասին: Հոդվածագիրն ադրադառնում է ոչ միայն նրանց կատարողական արվեստին, այլև մանկավարժական գործունեությանը՝ դասավանդմանն ու մեթոդաբանությանը: Հեղինակը՝ կիսվում է իր հուշերով գնահատանքի արժանացնում նրանց դերը հայ արվեստում և մշակույթում: Աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանն իր բազմաթիվ ստեղծագործություններում օգտագործել է տավիղ նվագարանը՝ թե՛ սիմֆոնիկ, թե՛ բալետային և թե՛ մենանվագ: Օրինակ է բերում Ա. Խաչատրյանի երաժշտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ գրաված «Ձոն ուրախության» սիմֆոնիկ պոեմը՝ գրված ջութակահարների անսամբլի, երգչախմբի, սիմֆոնիկ նվագախմբի, մենակատարների և տավիղների համար, որտեղ կոմպոզիտորը ներառել է 12 տավիղ:

Բանալի-բառեր. տավիղ, Սարաջևաներ, Նատալյա, Կիռա, Գնեսինների անվան ռուսական երաժշտական ակադեմիա, մանկավարժություն, Արամ Խաչատրյան, ստեղծագործություն, կատարողական արվեստ:

Abstract

The author Gayane Mnatsakan Harutyunyan studied in the class of Natalya Popova-Sarajeva, then she did her post-graduate studies under Kira Sarajeva at the Gnesin Russian Music Academy in Moscow and presents her memoirs in her article "Three Generations of the Sarajeva Harpists". The author focuses not only on their performing art, but also on their pedagogical activities, teaching and methodology. The author shares her memoirs and appreciates their role in Armenian art and culture. She mentions the world-famous Armenian composer Aram Khachatryan s approach to harp art, who, among his symphony used harp, ballet and solo works. As an example she mention A. Khachatryan's symphonic poem "Ode to Joy", which holds a significant place in Khachatryan's musical legacy. This piece was composed for an ensemble of violinists, a choir, a symphony orchestra, soloists and 12 harps.

Key Words: harp, Sarajevas, Natalya, Kira, The Gnesins Russian Academy of Music, pedagogy, work, performing arts.

Абстракт

Арфистка, профессор ЕГК **Гаяне Мнацакановна Арутюнян.- “Сараджевы”.**

Автор статьи Г. М. Арутюнян училась в классе Натальи Поповой-Сараджевой, затем в аспирантуре под руководством Киры Сараджевой в Российской академии музыки имени Гнесиных в Москве. Это ее воспоминания о трех поколениях арфистов из рода Сараджевых. Автор делится своими воспоминаниями, высоко оценивает роль музыкантов, методы их преподавания в армянском искусстве. Всемирно известный армянский композитор Арам Хачатурян использовал арфу как в симфонических, сольных произведениях, так и в музыке для балета. В качестве примера автор приводит произведение, которое занимает особое место в музыкальном наследии Хачатуряна - симфоническая поэма "Ода к радости", написанная для ансамбля скрипачей, хора, симфонического оркестра, солистов и 12 арф.

Ключевые слова: арфа, Сараджевы, Наталья, Кира, Российская академия музыки им. Гнесиных, педагогика, произведение, исполнительское искусство.

Նախաբան

Անցյալիս հուշերից հառնում է 1973 թ. երևանյան աշնանային գեղեցիկ այն օրը, երբ տասնչորսամյա, կապուտաչյա աղջնակն իր մոր հետ կանգնել էր Տերյան փողոցի մի տան մոտ, որի մուտքին փակցված էր հուշատախտակ հետևյալ գրությամբ. «Այս տանն ապրել է Կոնստանտին Սոդոմոնի Սարաջևը»:

Սարաջևաներ

Դա ես էի, որ ցանկանում էի տավիղ նվագել սովորել Կոնստանտին Սարաջևի թոռնուհու՝ տաղանդավոր տավղահարուհի Նատալյա Պոպովա-Սարաջևայի դասարանում: Այդ նույն տանն է ապրել Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր, ռուսական սիմֆոնիկ դիրիժորության հիմնադիր, Արթուր Նիկիշի աշակերտ Կոնստանտին Սոդոմոնի Սարաջևը: Այստեղ ամեն ինչ հուշում էր մեծ արվեստագետի համեստ ապրելակերպի մասին: Հյուրասենյակում աչքի էր ընկնում մեծ գրադարանը, մոմակալներով դաշնամուրը՝ որ շատ հին էր ու արժեքավոր, իսկ սենյակի կենտրոնում բազմել էր ֆրանսիական շքեղ տավիղը: Նրա տեսքը հուշում էր, որ նույնպես հին է ու արժեքավոր՝ ներքևի մասում երկու նստած առյուծների քանդակ էր, իսկ սյունը փաթաթված էր խաղողի ողկույզներով, սյունի գագաթը զարդարում էր հին հունական հագուստներով չքնաղ կանանց մի խումբ:

Ինձ համար պարզ էր, որ այդ շքեղ երաժշտական գործիքը Սարաջևայինն էր: Շուտով ներս մտավ ապագա ուսուցչուհիս՝ աննման գեղեցկության տեր մի կին, որը հետագայում դարձավ իմ ուսումնառության համարյա տաս տարվա ուղեկիցը: Դրանք անչափ հետաքրքիր և հուզումնառատ տարիներ էին, լի հաջողություններով, որոնց հասա շնորհիվ իմ սիրելի ուսուցչուհու: Նատալյա Սարաջևան դասավանդում էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, ինչպես նաև երաժշտամանկավարժական ուսումնարանում: Ն. Սարաջևան Երևան էր եկել Մոսկվայից, Հայրենական պատերազմի տարիներին և տավիղ նվագել էր սովորել նույնպես՝ Մոսկվայից Երևան տեղափոխված պրոֆեսոր Քսենյա Էրդելիի մոտ, որն այդ ժամանակ դասավանդում էր Մոսկվայի կոնսերվատորիայում: Այդ տարիներին էլ Քսենյա Էրդելին Երևանի կոնսերվատորիայում հիմնադրեց տավղի դասարանը: Նա առաջին անգամ կատարեց Ռ. Մ. Գլիերի Կոնցերտը գրված պատերազմի տարիներին՝ տավղի և նվագախմբի համար, Երևանի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ:

Հայրենական պատերազմի ավարտից հետո Նատալյա Սարաջևան Քսենյա Էրդելիի հետ մեկնում է Մոսկվա և ուսումը շարունակում կոնսերվատորիայում: Ավարտելով կոնսերվատորիան, նա վերադառնում է Երևան, որտեղ աշխատում է Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում՝ որպես նվագախմբի առաջին տավղահար:

Նատալյա Սարաջևան, լինելով այդ մեծ երաժիշտների ընտանիքի ներկայացուցիչ, մոսկովյան դպրոցի լավագույն տավղահարուհիներից էր:

Իր բազմամյա աշխատանքի ընթացքում Սարաջևան կատարել է բազմաթիվ մենանվագներ տարբեր օպերային և բալետային ստեղծագործություններից՝ «Դոն Կիխոտ», «Կարապի լիճը», «Սպարտակ», «Գայանե», «Սիդա», «Անուշ», «Տրավիատա», «Լյուչիա դե-լա Մերմուր» և այլ օպերաներում:

Նատալյա Սարաջևայի մոտ ուսանելիս բազմաթիվ ելույթներ եմ ունեցել: Նրա ցուցումով մասնակցել եմ «Դպրոցականի ֆիլհարմոնիայի» կազմակերպած համերգներին, որտեղ կատարել եմ Հենդելի կոնցերտը տավղի և նվագախմբի համար (2-3 մաս): Ուսուցչուհուս կազմակերպած տավղահարների քառյակի անդամ եմ եղել: Նրա համար անչափ դժվար էր չորս տավիղ հայթայթելը: Փորձերի համար տրամադրվեց աշակերտներից մեկի տան մեծ հյուրասենյակը, որտեղ անց էին կացվում քառյակի փորձերը:

Տավղահարների քառյակը մասնակցել է բազմաթիվ համերգների ու կատարել Արամ Խաչատրյանի «Վարդագույն աղջիկների պարը», «Գայանե» բալետից, Ալեքսանդր Հարությունյանի «Պրելյուդը» և այլն: Այդ տարի Դիլիջանում կոմպոզիտորների միության տանը հանգստանում էր Կոստանտին Սարաջևի դուստրը՝ Մոսկվայի Մեծ թատրոնի առաջին տավղահարուհի Կիրա Կոնստանտինովնա Սարաջևան, որը պատահաբար ներկա էր տավղահարների մեր քառյակի փորձին: Այդ ճակատագրական հանդիպումը մեծ նշանակություն ունեցավ իմ հետագա ուսման ընթացքի վրա: Նա ցանկություն հայտնեց անհատապես ունկնդրել յուրաքանչյուր աշակերտին և վերջում, հայացքն ուղղելով ինձ, ասաց.

-Նատա՛լյա, կտեսնես որ ապագայում այս աշակերտուհիդ բոլորից լավ կնվագի:

Ուսուցչուհիս մի պահ լռեց, հետո ասաց.

- Տեսնե՛նք, տեսնե՛նք:

Անցան տարիներ, ընդունվեցի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, իմ սիրելի ուսուցչուհու՝ Նատալյա-Պոպովա Սարաջևայի դասարան: Մեծ էր երջանկությունս, քանի որ պետք է սովորեի այդ բարձրակարգ երաժշտի, խստապահանջ մասնագետի և ինձ դեպի արվեստի բարձունքները մղող անձնավորության դասարանում: Մեկ տասնամյակ շարունակ Նատալյա Իվանովնայի սերն ու հոգատարությունը ուղեկցեցին ինձ: Սարաջևան կարողանում էր ուսանողների մեջ արթնացնել ակնածանք մեծ կոմպոզիտորների ստեղծագործությունների նկատմամբ և կարևորում էր նրանց երաժշտական մտքի ճշգրիտ մեկնաբանությունը, հավատարիմ մնալ կոմպոզիտորի ոգուն, նրա ոճին և կերպարների բացահայտմանը:

Նա մեզ սովորեցնում էր, որ ամեն մի հնչյունը մի աշխարհ է, մի էություն: Ես չէի դադարում հիանալ բարձր ավանդույթներ կրող արվեստագետների ընտանիքի այդ ներկայացուցչով: Նա հիմք դրեց տեխնիկապես նվագի և երաժշտականության գաղտնիքներին և տվեց այն լավագույնը, որով հարուստ էր տավղի մոսկովյան դպրոցը:

Նվիրվում է Կ. Սարաջևի ծննդյան 145-ամյակին

Մեծ է Նատալյա Սարաջևայի դերը Հայաստանում տավղի դպրոցի զարգացման գործում: Նա կառղանում էր աշակերտներին և ուսանողներին համախմբել տավիղ նվագարանի շուրջ՝ նրանց մեջ սեր արթնացնելով դեպի այդ գործիքը: Նրա բազմաթիվ շրջանավարտներ այսօր էլ աշխատում են թե՛ սիմֆոնիկ և թե՛ օպերայի և բալետի սիմֆոնիկ նվագախմբերում, ինչպես նաև դասավանդում են Երևանի երաժշտական դպրոցներում, ուսումնարաններում, կոնսերվատորիայում:

Հայրենիքը մեծավաստակ ուսուցչին արժանացրեց ՀՍՍՀ վաստակավոր արտիստի կոչման:

Կիրա Կոնստանտինի Սարաջևան

Ուսուցչուհիս՝ կոնսերվատորիայում ուսմանս երկրորդ տարում վճռեց ուղարկել ինձ Մոսկվա՝ Ադա և Կիրա Կոնստանտինի Սարաջևաների մոտ լսելու իմ կատարումը: Նրանք ՍՍՀՄ-ում ճանաչված տավղահարուհիներ էին: Տասնյակ տարիներ և ավել եղել էին Մոսկվայի «Մեծ թատրոնի» նվագախմբի առաջին տավղահարուհիները կատարելով բազմաթիվ մենանվագներ: Պրոֆեսոր Կիրա Կոնստանտինովնան դասավանդում էր նաև Մոսվայի Գնեսինների անվան երաժշտական ինստիտուտում: Նա նաև տավղի բազմաթիվ ձեռնարկների, գիտամեթոդական գրքերի հեղինակ էր: Սարաջևաները համաձայնեցին ինձ ունկնդրել, և ես հայտնվեցի Մոսկվայի Գորկու անվան փողոցի այն տանը, որտեղ ապրում էր Կիրա Կոնստանտինովնա Սարաջևան: Անչափ մեծ էր հուզմունքս... Ի զարմանս ինձ նույնիսկ չընդհատեցին, մինչև ես ավարտեցի ծրագրիս կատարումը: Ապա նրանք խոսեցին և խորհուրդներ տվեցին ստեղծագործությունների ավելի կատարյալ կատարման հետ կապված: Երևան վերադառնալուն պես Ադա Կոնստանտինովնայի՝ ուսուցչիս գրած նամակից իմացա Կիրա Կոնստանտինովնայի կարծիքը կատարմանս վերաբերյալ: Ադա Կոնստանտինովնան գրում էր, որ Կիրա Կոնստանտինովնայի կարծիքով, որ ինձ կարելի է պատրաստել տավղահարների համամիութենական մրցույթին: Ուսուցչուհուս ուրախությանը սահման չկար. դա այնքան բարձր գնահատական էր, որ ես մինչ օրս երախտապարտ եմ նրանց: Այդ պահից սկսվեց իմ և ուսուցչուհուս ընկերությունը: Կոնսերվատորիայում ուսանելուս հինգ տարիների ընթացքում ես մեկնում էի Մոսկվա և դասեր ստանում այդ մեծանուն տավղահարուհուց, որը մեծ հետք և անջնջելի հիշողություններ թողեց ինձ վրա: Կիրա Կոստանտինովնայի հետ պատրաստում էինք բարդ ծրագրեր՝ Ս. Ս. Պրոկոֆևի «Պրելյուդը», Գ. Շպորի՝ «Վարիացիաները», Ա. Ի. Խաչատրյանի՝ «Տոկկատը», Ա. Վ. Մոսոլովի՝ «Կոնցերտը», Ռ. Մ. Գլիերի՝ «Կոնցերտը», Պ. Հինդեմիտի՝ «Սոնատը»:

Ավարտելով կոնսերվատորիան՝ երազանքս էր ասպիրանտուրայում սովորել Կիրա Սարաջևայի դասարանում Մոսկվայում: Այդ տարիներին Երևանի կոնսերվատորիայի ռեկտորն էր Ղազարոս Սարյանը, ունենալով ՀՀ-ի բարձրագույն և միջնակարգ հաստատությունների նախարարության համաձայնությունը, հրամանով իջեցված միակ տեղը ասպիրանտուրայում տրվեց ինձ:

Սկսվեց ուսման այն հրաշք ժամանակաշրջանը, երբ հաճախ մեկնում էի Մոսկվա՝ դասերի Կիրա Սառաջևայի մոտ: Երկու տարիները, որոնք այնքան լի էին արվեստով և ողողված էին մեծ ջերմությամբ, բեկումնային եղան: Կիրա Կոնստանտինովնայի միջոցով ծանոթացա մեծանուն տավղահարուհիների հետ, որոնց հետ անձնական շփումը մի նոր աշխարհ էր ինձ համար: Մեծ էր իմ հուզմունքը, երբ հերթական միջազգային մրցույթի դափնեկրի համերգին Կիրա Կոնստանտինովնան ծանոթացրեց նաև Վերա Դուլովայի հետ: Այդ հանրահայտ տավղահարուհին անչափ ջերմ ողջունեց ինձ և զարմացավ, որ Հայաստանից տավղահարուհի է եկել, խնդրեց իր ողջույնները փոխանցել Ն. Սարաջևային: Երկու ամիսը մեկ յոթ օրով մեկնում էի Մոսկվա: Յուրաքանչյուր օր մեր դասերը տևում էին յոթից ութ ժամ: Ինչպիսի՜ պրոֆեսիոնալիզմ, երաժշտական մտքի ինչպիսի՜ ճախրանք, տավղի ինչպիսի՜ իմացություն... Ի՜նչ բերկրանք էի ապրում, երբ պետք էր ստեղծագործություններին գույներ դնել.

- Ты уже художник, сама рисуй.

Ամառային արձակուրդներին Մոսկվայում կարող էի մի ամբողջ ամիս դասերի գնալ: Սակայն ինձ հարկավոր էր նաև պարապել: Այստեղ էլ ինձ օգնության հասավ իմ աննման պրոֆեսորը: Նա Գնեսինների ինստիտուտի ռեկտորից հատուկ թույլտվություն էր վերցրել իմ պարապմունքների համար: Պարզվեց, որ ամռան ամիսներին Կիրա Կոնստանտինովնան իր տավիղը տեղափոխում էր ամառանոց «Շառապովա Օխոտա», որտեղ նա և պարապում էր, և՛ հանգստանում: Առավոտյան շուտ ես տնից դուրս էի գալիս և միայն երեկոյան հասնում ամառանոց: Քանի որ նույն օրը վերադառնալը անհնար էր, մնում էի գիշերելու: Հիշողությանս մեջ Կիրա Կոնստանտինովնայի ամուսնու՝ Պյոտոր Նիկիֆորովիչի կերպարն է՝ նախկինում զինվորական վիրաբույժ էր եղել: Նա մի անչափ հոգատար և սիրալիր անձնավորություն էր, ով մեզ հեռացնում էր մեր աշխատանքից՝ հրավիրելով իր պարտեզ, որը լի էր մորենիներով և բազմաթիվ համեղ բանջարեղեններով:

Մի գիշերն արթնացա՝ զգալով, որ մրսում եմ: Բայց անմիջապես մի տաք վերմակ ծածկեց ինձ. Կիրա Կոնստանտինովնան էր, հետո լուռ ու անձայն հեռացավ: Այդպես միայն մայրս է հոգատար եղել իմ նկատմամբ:

Անցան ասպիրանտուրայի ուսման երկու տարիները: Դասերիս հաճախ էր ներկա լինում Ադա Կոնստանտինովնան, ով անչափ երջանիկ էր, որ իրենք էլ «մի փոքր կարողանում են օգնել իրենց սիրելի Հայաստանին»: Ավարտական քննությունս նվագեցի Գնեսինների ինստիտուտի ամբիոնի վարիչ Տոնխայի, տավղահարուհի Ն. Շամենային և Կ. Սառաջևայի ունկնդրմամբ: Ավարտեցի գերազանց, ձեռքիս ունենալով նրանց անհատական կարծիքները:

Այդ տարի արդեն Մոսկվա էր տեղափոխվել ուսուցչուհիս՝ Ն. Սարաջևան և Երևանի կոնսերվատորիայի ռեկտոր Էդգար Հովհաննիսյանի հրավերով ստանձնեցի տավղի դասարանի ղեկավարումը, որը մինչ օրս էլ սիրով իրականացնում եմ:

Նատալյա Սարաջևան Արամ Խաչատրյանի և Հ. Չեքիջյանի հետ Երևանի Լենինի այժմ՝ Հանրապետության հրապարակում 1970-ական թթ.

Natalya Sarajeva with Aram Khachatryan and H. Cheqijyan in Lenin (Republic) Square in Yerevan in the 1970s.

Наталья Сараджева с Арамом Хачатуряном и Оганесом Чекиджяном на площади Ленина (ныне площадь Республики) 1970-е годы.

Կիրա Կոնստանտինի Սարաջևայի ծննդյան 75-ամյակի համերգային ելույթից
Մոսկվա, 1985 թ.

From Kira Konstantin Sarajeva S 75th birthday concert performance
Moscow, 1985

Из концертного выступления к 75-летию Киры Константиновны Сараджевой,
Москва 1975 год

Ասպիրանտուրան ավարտելուց հետո իմ և իմ պրոֆեսորի միջև նամակագրական կապ հաստատվեց, որը հետագայում վերաճեց մեծ բարեկամության: Մինչ օրս էլ ես մեծ սիրով պահպանում եմ Կիրա Կոնստանտինովնայի նամակները, որոնք լի են խորհուրդներով և հոգատարությամբ:

Պետք է առանձնապես նշեմ Կիրա Կոնստանտինովնայի ուրախությունը, երբ ծնվեցին իմ դուստրերը: Մինչ այժմ էլ երեխաներս հիշում են Կիրա տատիկի՝ իրենց ուղարկած ճենապակյա տիկնիկները:

Մոսկվայում շքեղ հանդիսությամբ նշվեց Կիրա Կոնս-

տանտինովնայի ծննդյան 75-ամյակը: Համերգ երեկոյի ընթացքում նա կատարեց մի շարք ստեղծագործություններ, ինչպես նաև սոնատներ՝ թե՛ մենանվագ տավղի, թե՛ ալտի ու ջութակի նվագակցությամբ: Այդ հոբելյանի առթիվ Կ. Սարաջևային շնորհավորեց Երևանի կոնսերվատորիայի ռեկտոր Ա. Բ. Սմբատյանը: Տասնհինգ տարի անց, երբ Մոսկվայում մեծ հանդիսությամբ նշում էին Կ. Սարաջևայի ծննդյան 90 և ստեղծագործական գործունեության 70-ամյակները, Երևանից նրան հեռագրական շնորհավորանք ուղարկեց նրա նախկին ասպիրանտ, ներկայումս Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Գ. Հարությունյանը՝ տողերիս հեղինակը: Խորին ակնածանքով Երևանում եթեր հեռարձակվեց հաղորդում նվիրված Կիրա Կոնստանտինովնային, նրա կատարողական և մանկավարժական գործունեությանը: Ստանալով այս հաղորդման տեսագրությունը, շատ էր այն հավանել և ինձ գրած իր նամակում նշել էր. «Անչափ երջանիկ եմ, որ իմ Հայաստանում ինձ հիշում են»:

Կիրա Կոնստանտինովնան ունի երկու դուստր, ովքեր իրենց մասնագիտությունները գտել են ուրիշ ասպարեզներում: Սակայն դա չի խանգարում, որ նրանք լինեն սիրող դուստրեր և իրենց մորը նվիրված զավակներ:

Վերջաբանի փոխարեն

Մինչ օրս էլ պրոֆեսորիս հիշում եմ սիրով ու երջանիկ եմ, որ եղել եմ նրա ասպիրանտը, որ նրա կողքին եմ եղել մինչև իր կյանքի վերջին օրերը:

Աշխարհահռչակ հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանն իր բազմաթիվ ստեղծագործություններում հմտորեն օգտագործել է տավիղ նվագարանը թե՛ սիմֆոնիկ, թե՛ բալետային և թե՛ մենանվագ ստեղծագործություններում: Իր երաժշտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նրա «Զոն ցնծության» սիմֆոնիկ պոեմը՝ գրված ջութակահարների անսամբլի, երգչախմբի, սիմֆոնիկ նվագախմբի, մեներգիչների և տավիղների համար, որտեղ կոմպոզիտորը ներառել է 12 տավիղ: Առաջին տավղի նվագաբաժինը բարդ է թե՛ տեխնիկապես, թե՛ ռիթմիկ, թե՛ պեդալիզացիայի տեսանկյունից: Երկրորդ տավղի ձայնը գալիս է լրացնելու առաջինին, երկու ձայների համադրությամբ այն կարծես դառնում է կոնցերտ՝ գրված հենց տավղի համար՝ բարդ, բայց միևնույն ժամանակ ներդաշնակ: Երբ կատարում ես այս ստեղծագործությունը, հիանում ես կոմպոզիտորի՝ այսպիսի բարդ նվագարանի հրաշալի ճանաչմամբ և նվագարանի բոլոր հնարավորությունների ճիշտ օգտագործմամբ: Կոմպոզիտորի տաղանդը ևս մեկ անգամ փայլում է այս ստեղծագործության մեջ: Բացառիկ է նրա ունակությունը՝ նվագարանը լիարժեք և ժամանակակից լեզվով ներկայացնելու մեծ վարպետության տեսանկյունից:

Մեծ և գունագեղ են տավղի նվագաբաժինները «Գայանե» և «Սպարտակ» բալետներում: Մեծանուն տավղահար Մ. Մ. Մչեդելովը, հիացած «Գայանե» բալետով, այն տեղից առանձնացրել է «Վարդագույն աղջիկների պարը» հատվածը և այն փոխադրել 4 տավղի համար: Դեռևս երաժշտական ուսումնարանում սովորելու տարիներին ուսուցչուհիս՝ Նատալյա Սարաջևան, ստեղծեց տավղահարների քառյակ, իսկ առաջին ստեղծագործությունը, որ կատարեց քառյակը, «Վարդագույն աղջիկների պարն» էր: Այս գեղեցիկ երաժշտական հատվածը անհավանական հնչողություն ստացավ չորս տավղի կատարմամբ՝ դեռևս չլսված երանգների շնորհիվ:

Առանձնահատուկ ուզում եմ նշել այն երկու պիեսները, որ գրել է Արամ Խաչատրյանը տավղի համար: Դրանք են՝ «Արևելյան պարը» և «Տոկկատը»: Ունկնդրելով, ինչպես նաև ուսուցանելով ուսանողներին «Արևելյան պարը» ստեղծագործության մեջ հիացնում է կոմպոզիտորի՝ տավիղ նվագարանի հանդեպ սերը և նվագարանի բոլոր հնարավորությունների իմացությունը: Պիեսում թեման օգտագործվում է ամեն անգամ նոր գույնով և կարծես հառնում են Սարյանի չքնաղ կտավները: Պիեսում կոմպոզիտորն օգտագործում է դեկային շատ մոտ նվագելու տավղի ժամանակակից տեխնիկան, ինչի արդյունքում ձայնն ստանում է մի քիչ խուլ հնչողություն, իսկ թեման ուղեկցվում կրկնակի ֆլաժոլետներով՝ նրան եթերային երանգ տալով: Տավղի ժամանակակից կատարողական մեթոդներից մեկը՝ եղունգների միջոցով կատարումն է, որ Խաչատրյանը նույնպես օգտագործել է այս պիեսում, դրան հաղորդելով նոր երանգ: Պիեսում կոմպոզիտորն օգտագործում է թեմայի ձախ ձեռքով «էտուֆե»-ների կատարումը՝ ընդգծելով հնչողության խորությունը: Ապշեցնում է, թե ինչպես է վարպետն ստացել հայկական դափ նվագարանի հնչողություն՝ օգտագործելով տավղի վրա աջ ձեռքով դեկային մատներով հասցվող հարվածները: Ստեղծագործությունն ավարտվում է թեմայի օկտավներով կատարմամբ՝ հաղորդելով խորը, հզոր հնչողություն: Այս չքնաղ ստեղծագործությունը, հայկական շընչով և գույներով, համարվում է տավղի համար գրված լավագույն ստեղծագործություններից մեկը:

Տավղի համար գրված բարդ ստեղծագործություններից է Արամ Խաչատրյանի «Տոկկատը»: Այս ստեղծագործությունն առանձնանում է իր խրթին պեդալիզացիայով և ժամանակակից բարդ տեխնիկայով: Ստեղծագործությանը բնորոշ է տոկկատներին հատուկ արագ Allegro տեմպը: Տոկկատի միջին մասը հիշեցնում է «Սպարտակ» բալետի Ադաջոն, իր լայնաշունչ մեղեդիով և աշխույժությամբ: Ամբողջ պիեսը գրված է մեծ դինամիկայով:

Կոնսերվատորիայում տողերիս հեղինակի ուսումնառության տարիներին՝ 4-րդ կուրսում, Տոկկատը պարապելիս գույգ-գույգ դրվող պեդալների, ինչպես նաև նույն ոտքով դրվող բազմաթիվ պեդալների հաջորդականության հատվածում գտա ոտնակները կիրառելու շատ ավելի հարմար հերթականություն: Արդեն Մոսկվայում Գնեսինների երաժշտական ինստիտուտում (այժմ՝ Ռուսաստանի Գնեսինների երաժշտական ակա-

դեմիա, պրոֆեսոր Կիռա Սարաջևայի դասարան), հիշում եմ մեծ երաժիշտ-տավղահար Կ. Սարաջևայի ուրախությունը, երբ նկատեց, որ գտել եմ առավել հարմար տարբերակը բարդ պեդալիզացիան հաղթահարելու համար:

Կատարյալ ներդաշնակ են տավղի նվագաբաժիններն Արամ Խաչատրյանի սիմֆոնիաներում և մասնավորապես բալետներում: Կոմպոզիտորի՝ տավիղ գործիքի հնարավորությունների, գույների հիանալի իմացությունն արտահայտվում է նրա բազմաթիվ ստեղծագործություններում, որտեղ բացահայտվում են տավղի բազմերանգ հնչողությունն ու լայն հնարավորությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. *Հարությունյան Գ. Մ.,* Տավիղը իմ կյանքում, //Երաժշտական Հայաստան, 1 (2)2000 թ.:

Haruthyunyan G. M, Arfa in my life, //Musical Armenia, 1 (2)2000.

REFERENCES

1. *Haruthyunyan G. M.,* Tavigh' im kyanqum, //Yerzhshtakan Hayastan, 1 (2)2000.

Հեղինակի մասին. *ԳԱՅԱՆԵ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (15.10.1959 թ. ք. Երևան): Ավարտել է՝ 1984-ին՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ տավիղ մասնագիտությամբ, 1987-ին՝ Գնեսինների անվ. ռուսական երաժշտական ակադեմիայի ասպիրանտուրան, պրոֆ.՝ Կ. Կ. Սարաջևայի դասարանը: Դասավանդում է՝ 1994-ից ԵՊԿ դոցենտ՝ 2009-ից, ԵՊԿ պրոֆեսոր՝ պաշտոն 2018-ից: 2004-ից Սայաթ-Նովայի անվ. ՄԵԴ-ում ուսուցչուհի, Տավղի դասարաններ է ստեղծել Ք. Քուշնարյանի և Մ. Սարյանի, Մ. Միրզոյանի և Ա. Տեր-Ղևոնդյանի անվ. ՄԵԴ-ում, Վարպետության դասեր է վարել Իրանի և Գյումրիի աշակերտների համար: Աշխատել է՝ 1984-1990 թթ. 1-ին տավղահար՝ Ռադիոյի և հեռուստատեսության, 1982-1992 թթ.՝ 1-ին տավղահար ԵՊԿ օպերային ստուդիայի սիմֆոնիկ նվագախմբերում: Արժանացել է՝ շնորհակալագրերի մրցույթներին աշակերտների և ուսանողների փայլուն ելույթների համար: Հեղինակ է՝ մի շարք գիտական հոդվածների՝ նվիրված տավղի կատարմանը: Գ. Հարությունյանը հեղինակ է նաև ուսումնական ձեռնարկների՝ «Տավղի ձեռնարկ I-III դասարանների աշակերտների համար» (Եր., 2014 թ.), «Տավղի ձեռնարկ IV-V դասարանների աշակերտների համար», Եր., 2015 թ., «Տավղի ուսուցման ծրագիր յոթնամյա դպրոցի համար», Եր., 2016 թ.:*

Об авторе: *ГАЯНЕ МНАЦАКАНОВНА АРУТЮНЯН (род. 15.10.1959, Ереван). Окончила: ЕГК им. Комитаса (1984); аспирантуру Московского института им. Гнесиных, класс проф. К. К. Сараджевой (1987) . С 1994 г. занимала должность доцента ЕГК (в 2009 г. утверждена ВАКом), а с 2000 г. - профессора (в 2018 г. утверждена ВАКом). Преподавала: в ДМШ им. Саят-Новы (с 2004 года), основала классы в ДМШ им. К. Кушнарева, им. М. Сарьяна, им. М. Мирзояна, им. А. Тер-Гевондяна. Работала: в качестве 1-ой арфистки Симфонического оркестра Радио и Телевидения Армении (1984-1990); Симфонического оркестра Оперной студии ЕГК (1982-1992). Проводит мастер-классы для студентов из Гюмри и Ирана. Имеет грамоты за выступления своих учеников и студентов на различных конкурсах. Автор научных статей: Арфа в моей жизни., //Музыкальная Армения 2000 г.; Арфа во французской школе, //Музыкальная Армения, #3-4 (26-27) 2007 г.; Армянские арфы, Ер., 2018 г. и т. д. Г.А. автор учебников "Учебное пособие для арфы для учеников 1-3 классов" (Ер., 2014); "Учебное пособие для арфы для учеников 4-5 классов" (Ер., 2015); "Программа для арфы для семилетней школы" Ер., 2016.*

About the author: *GAYANE MNATSAKAN HARUTYUNYAN (born 15.10.1959, Yerevan), Professor at YSC. Harutyunyan graduated in 1984 - from Yerevan Komitas State Conservatory with a degree in harp. In 1987 she completed her postgraduate studies at Gnessin State Musical-Pedagogical College in Moscow, class of prof. K K. Sarajeva. Since 1994 she has been teaching at YSC in the position of Associate Professor (approved by SCC in 2009), and since 2000 - of Full Professor (approved by SCC in 2018). Since 2004 G. Harutyunyan has been teaching harp at Sayat Nova Children's Music School, she also initiated harp classes at C. Kushnaryan, Gh. Saryan, M. Mirzayan, and A. Ter-Ghevondyan music schools. She has held master classes for students from Iran and Gyumri. In 1984-1990 she was the Principal Harpist at the State Radio and Television Symphony Orchestra of Armenia, and in 1982-1992 - the Principal Harpist at YSC Opera Studio Orchestra. She was awarded certificates of appreciation for her students' brilliant performances. She is author of a number of scientific articles on harp performance published in the Collection of Teaching and Methodological Articles by Professors of Yerevan Komitas State Conservatory, Issue 7, 2010, Yer., YSC Publishing House, also "Harp in My Life" (Yer., 2000), "Harp in the French School"published in //"Musical Armenia", 3-4 (26-27) (Yer., 2007) and "Armenian Harps" (Yer., 2018), etc.. G. Harutyunyan is also author of educational manuals: "Harp Handbook for Students of I-III Grades" (Yer., 2014), "Harp Handbook for Students of IV-V Grades" (Yer., 2015), "Harp Teaching Program for Seven-year School" (Yer., 2016).*